ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **21/10/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Աղաջանյանը, Բելլա Թամրազովան, Անի Հարությունյանը, Մարինե Գրիգորյանը, Ավագ Ասատրյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Երվանդ Եղիազարյանը, Գոհար Սրապյանը, Դավիթ Այվազյանը, Նարա Հովհաննիսյանը, Նարեկ Հովսեփյանը, Արմեն Խաչատրյանը, Վեյնամին Թանգյանը, Սուսաննա Սահակյանը

Նիստը վարում էր համայնքի ավագանու անդամ՝ Սուրեն Վարդանյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը զեկուցեց, որ Սիսիան համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանը 2024թ. հոկտեմբերի 14-ին դիմում է ներկայացրել լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և ազատելու համայնքի ղեկավարի զբաղեցրած պաշտոնից, ինչպես նաև համայնքի ավագանու մանդատից: 2024 թվականի հոկտեմբերի 11-ից աշխատանքից ազատման և մանդատից հրաժարվելու դիմում է ներկայացրել նաև համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Հովհաննիսյանը: 2024 թվականի հոկտեմբերի 15-ին թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը իր նիստով ընդունել է հրաժարականները և լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած ավագանու անդամի մանդատները փոխանցել է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի հերթական համարներին՝ Արմեն Հակոբջանյանի փոխարեն մանդատը ստացել է Դավիթ Հարությունյանը, իսկ Կարեն Հովհաննիսյանի փոխարեն՝ Անահիտ Գևորգյանը: Աշխատակազմի քարտուղարը շնորհավորեց նոր մանդատները ստացած ավագանու անդամներին:

Կ. Իվանյանը տեղեկացրեց նաև, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության ավագանու 11 անդամների նախաձեռնությամբ արտահերթ նիստ է գումարվել, որի օրակարգում ընդգրկվել է մեկ հարց է. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության օրը սահմանելու մասին»: Օրենքով նիստը պետք է վարի ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը: Ավագանու անդամներից տարիքով ավագը Սուրեն Վարդանյանն է:

Ավագանու անդամ Ս. Վարդանյանը ողջունեց նիստին ներկա գտնվողներին և նշեց, որ բոլորի նպատակը մեկն է՝ աշխատել ի շահ համայնքի: Այն, ինչ կատարվեց, լավ չի և պատիվ չի բերում բոլորին: Հավելեց նաև, որ պետք է աշխատեն ավելի լավ, նվիրված, առանց սխալների:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 21-ի արտահերթ նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 082-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.3-րդ հոդվածի 1-ին մասով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի N 819-Ա որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության օր և ժամ սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 24-ը՝ ժամը 11:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամ Հ. Առաքելյանը առաջարկեց արտահերթ ընտրության օր և ժամ սահմանել հոկտեմբերի 24-ին, ժամը 11:00-ին:

Կ. Իվանյանը նշեց, որ հոկտեմբերի 14-ից համայնքը ղեկավար չունի և հետաձգել պետք չի, քանի որ անելիքները շատ են:

Ջ. Մարգարյանը ասեց, որ օրենքը խախտել են, իսկ Կ. Իվանյանը պատասխանեց, որ օրենքը չեն խախտել, օրենքում հստակ գրված է, որ համայնքի ղեկավարի պաշտոնը թափուր լինելու դեպքում ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում անցկացվում է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն:

Ջ. Մարգարյանն ասեց, որ ավագանու անդամներից գրեթե բոլորն աշխատում են, և ժամը հարմար չէ:

Կ. Իվանյանը պատասխանեց, որ օրենքի պահանջն է ժամը 11:00-ն:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 083-Ա/

Ս. Վարդանյանը հորդորեց ավագանու անդամներին նիստին ներկայանալ ավելի պատշաճ՝ մանրամասն կարդալ նիստի օրկարգում ներառված հարցերը և ճիշտ որոշումներ ընդունել:

Ջ. Մարգարյանը նշեց, որ նախկինում էլ լավ էին աշխատում և յուրաքանչյուրն իր չափով պատասխանատու է:

Նիստը հայտարարվեց փակված:

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱՋՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____